ZCMC
ZANGEZUR PRESERVING VALUES

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան 3309, Լեռնագործների 18
Հեռ.՝ +374 285 33131
Էլ. փոստ՝ info@zcmc.am

Աճուրդին մասնակցելու հրավեր

Հարգելի տիկնայք և պարոնայք,
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն հրավիրում է Ձեզ մասնակցելու սև մետաղի ջարդոնի վաճառքի **բաց աճուրդին**, որը կկայանա **2025 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 10:00-ին (Երևանի ժամանակով)** հետևյալ հասցեով՝
ք. Երևան, Վազգեն Սարգսյանի 2, 9-րդ հարկ, «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի գրասենյակի խորհրդակցությունների սենյակ
Աճուրդի առարկան՝ սովորական որակի ածխածնային պողպատի՝ **CT-3СП** մակնիշի սև մետաղի ջարդոն
Ընդհանուր ծավալը՝ մոտ 3 300 տոննա
Աճուրդի ձևաչափը՝ բաց
Մասնակիցների գրանցում.
Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել մինչև **2025 թվականի ապրիլի 23-ը:** Գրանցման համար խնդրում ենք robert.davtyan@zcmc.am էլեկտրոնային հասցեին ուղարկել հետևյալ փաստաթղթերը.
1. Աճուրդին մասնակցելու հայտ՝ ընկերության պաշտոնական ձևաթղթի վրա, նշելով կազմակերպության անվանումը և կոնտակտային տվյալները,
2. Լիազորված ներկայացուցչի անձնագրային տվյալները և ԱԱՀ,
3. Աճուրդին մասնակցելու իրավունքի լիազորագրի սկանավորված տարբերակը (եթե կիրառելի է),
4. Աճուրդի բոլոր պայմանների հետ համաձայնության հակիրճ հաստատում:
Փաստաթղթերն ուղարկվում են **էլեկտրոնային եղանակով:** Հստակեցումների անհրաժեշտության դեպքում դիմել հետևյալ հեռախոսահամարով՝ **+374 94 702 080:**

Կարևոր տեղեկատվություն

1. Աճուրդի է հանվում **մեկ լոտ՝ 3 300 տոննա քաշով:**
2. Մեկ տոննայի **մեկնարկային գինը՝ 50 000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:**
3. **Աճուրդի քայլը** կազմում է մեկնարկային գնի **2%-ը (1000 դրամ)**: Աճուրդի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, **ով երրորդ քայլի արդյունքներով առաջարկել է ամենաբարձր գինը,** եթե վերջին գնային առաջարկը երեք անգամ հայտարարելուց հետո ոչ մի մասնակից չհայտնի գինը բարձրացնելու մտադրություն:
4. Ջարդոնն իրացվում է Վաճառողի տարածքից (ք. Քաջարան, ք. Կապան) **ինքնուրույն դուրս բերման** պայմանով: Ջարդոնի **բեռնումը և** անհրաժեշտ չափերով **կտրումն** իրականացվում է Գնորդի հաշվին: Գնորդին տրվում է առավելագույնը **90 օրացուցային օր՝** պայմանագրի ստորագրման պահից ամբողջ լոտը (3300 տոննա) դուրս բերելու/առաքելու համար:
5. **Վճարման պայմանները**. ջարդոնի առաքումն իրականացվում է Գնորդի կողմից **10 000 000 դրամի չափով կանխավճարի** փոխանցումից հետո: Այդ գումարի չափով բեռնառաքումից հետո Գնորդը փոխանցում է հաջորդ **10 000 000 դրամի չափով** կանխավճարը և այլն, մինչև ամբողջ լոտի լրիվ վճարումը:
6. Աճուրդը չի կայանա, եթե դրա անցկացման պահին գրանցված լինի միայն մեկ մասնակից:
7. Աճուրդին մասնակցությունը նշանակում է դրա բոլոր պայմաններին լիակատար համաձայնություն:

Սպասում ենք Ձեր մասնակցությանը:
Հարգանքով՝

«ԶՊՄԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն

Աճուրդային հանձնաժողովի նախագահ

Սինյակով Ա.Ա.